ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- սեպտեմբերի 2020 թվականի №---Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի №159Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածը, 59-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշումը և հաշվի առնելով «Հ.Ա.Գ. ԵՌՅԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի օգոստոսի 7-ի №20/8 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի նոյեմբերի 4-ի «Հ.Ա.Գ. ԵՌՅԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գառնի-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №159Ա որոշմամբ «Հ.Ա.Գ. ԵՌՅԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Գառնի-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0184 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել տասնհինգ տարով՝ որոշման՝

   1) 1-ին կետում «15 տարի» բառերը փոխարինելով «մինչև 2035 թվականի նոյեմբերի 4-ը» բառերով, իսկ «Կոտայքի մարզի Գառնի գյուղի վարչական տարածքում, «Գառնի-1» ջրատարի վրա» բառերը փոխարինել «Կոտայքի մարզի Գառնի համայնքի վարչական տարածքում, «Գառնի-Երևան» խմելու ջրատարի վրա» բառերով.

2) 2-րդ կետով հաստատված հավելվածի 3-րդ կետում «2020» թիվը փոխարինել «2035» թվով:

2. «Հ.Ա.Գ. ԵՌՅԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝
   1) «Գառնի-1» փոքր հիդրոէլեկտրակայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքի «Էներգետիկայի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված տասնհինգ տարվա ժամկետը ընկերության համար ավարտվում է 2020 թվականի նոյեմբերի 4-ին.
   2) իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի նոյեմբերի 4-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- սեպտեմբերի 2020թ.